

նելու համար: Կարդալ Աւետարան, Նարեկ, զարմանազան համայնիւններ, բոլորն ալ յամառ ցաւերու ասեղներէն թելադրուած: Քիչիկ մը խօսիլ պատիկները զարնող փորհարութեան վրայ: Հալածել մօեղները մալարիային պատասխանատուութիւնը անոնց բեռնել ու մեր բոլոր սուրբերը վկայութեան կանչելով՝ սիրտ տալ ծերուկին, որուն մէկ հատիկ աչքին լոյսը լիռնէն, զարնուած, տուն է բերուած հոգին փչելու: Օ՛, կեանքը: Կեանքը իր այս խորշակահար տրտմութեանց փարթամ հանդէսովը: Խոտ ուտել եւ անօթի քնանալ: Ու այս ամէնուն վրայ, այս ամէնը կարծես ստուերի մէջ ձգող մղձաւանջը, որ ահն է թուրքին, 1900ին:

Կը մտնեմ սրճարան:

Ժպտուն, գրգռուած ամբոխը -երեւոյթը բացառիկ է ամէն կարգի մարդոց ներկայութեամբ- տեղ կու տայ ինծի:

-Ի՞նչ կայ նորէն, տղա՛ք:

Տարիներէ ի վեր ասոնց պակասը կարծես կը թարմացնէ հին յիշատակներ: Ճամբորդի տարազով: Ու հայ: Քանի որ մէկը, որուն ձայնը կայ, բայց մարմինը՝ ոչ, շատ խոնարհ ըլլալուն, վէճի է արդէն աղայի մը հետ:

Կը բացուի ամբոխը առջիս: Կը գտնեմ ձայնին տէրը:

Առաջին ականարկով, տաքարիւն, համակրելի մէկը: Քիչիկ մը կասկածելի՝ մօրուքիկը, որ կը թուի դուրսէն դրուած է եւ, հետեւաբար՝ սուտ:

Այսպէս կը մտածեմ, յիշելով իսկոյն ոստիկանական խաբեբայութիւնները, ջարդերէն ետք ընթացիկ, գրեթէ օրինական նկատուած: Մարդիկը կնիկ ու զաւակ ունին եւ ամսականը առնուազն չորս ամիս յետոյ կ'ելլէ: Այս անձկութիւնը մարդերը ըրած է հնարագիւտ: Անգործ փաստաբանները ողջ ըլլան: Ոստիկանական հարիւրապետ մը զանոնք կը վարձէ, կը դիմակէ, մօրուք մը կը տեղաւորէ ու կը դրկէ շրջանի հայ գիւղերը, որս հանելու: Որսը հասկնալի է: Այս կերպ յարդարուած, հանդերձր-ւած սա մարդիկը իրենց չհասկցած լեզուն (ինչ պէտք լե-